ԽՄԲԱԿԻ ԾՐԱԳԻՐ

<<Մեր նկարիչները>>

ԿՐԹԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆԸ՝ ՏԱՐՐԱԿԱՆ ԵՎ ՄԻՋԻՆ

ԺԱՄԱՔԱՆԱԿ

Մեկ ուսումնական տարում 10ամիս, շաբաթական 2 այց՝ 1 ժամ 30 րոպե (շաբաթական 2 ժամ)

Հեղինակ ՝ Արզումանյան Անահիտ

ԲԱՑԱՏՐԱԳԻՐ

<<Մեր նկարիչները>> մասնագիտական նկարչության խմբակը համարվում է արտադասարանական գործունեության կարևոր տեսակներից մեկը: Նկարչության պարապմունքները նպաստում են սովորողների գեղագիտական ճաշակի, հոգեհուզական դաշտի, աշխարհայացքի զարգացմանը և առարկայի դասավանդման ընթացքում ձեռք բերած գիտելիքների և հմտությունների ամրապնդմանը:

Նպատակները

Գեղարվեստական խմբակները հանրակրթական դպրոցի հետ մեկտեղ կոչված են օժանդակելու աշակերտի /անհատի/ ներդաշնակ զարգացմանը:

Խմբակում ամբողջ ուսուցումը պետք է տարվի աշակերտների տարիքային առանձնահատկություններից ելնելով: Առաջադրանքները պետք է լինեն գրավիչ, աշակերտի մեջ առաջացնեն վառ պատկերացում, լինեն հետաքրքիր: Անհրաժեշտէ, որպեսզի արվեստանոցում ստեղծվի ստեղծագործական մթնոլորտ, արվեստին նվիրվելու և ծառայելու ձգտում:

Խնդիրները

Յուրաքանչյուր առարկայի հիմքում պետք է դրված լինի նատուրայի՝ բնության ուսումնասիրումը: Երեխաների մոտ պետք է զարգացնել կերպարային դիտողականությունը, որը կօժանդակի շրջապատի և կյանքի պոետիկ ընկալմանը, դաստիարակելով և խորացնելով երեխայի մեջ հայրենասիրական զգացումները: Աշակերտի պրակտիկ գործունեությունը պետք է հիմնված լինի տեսական գիտելիքների վրա: Հետևապես, աշակերտին ուսման ընթացքում պետք է ծանոթացնել արվեստի տեսական հիմունքներին, հեռանկարչության հիմունքներին, գույնի տեսության և պլաստիկ անատոմիայի, գեղանկարչության տեխնոլոգիայի հիմունքներին, ինչպես նաև կերպարվեստի դասական նմուշներին: Դասական արվեստի ժառանգությանը ծանոթանալիս աշակերտը պետք է ծանոթանա նաև ժամանակակից կերպարվեստին: Համաշխարհային, ինչպես նաև հայրենական դասական արվեստի լավագույն նմուշների հիման վրա երեխաներին պետք է ծանոթացնել ծավալների ու գույնի ու նրանց ներդաշնակության գաղտնիքներին: Անհրաժեշտ է, որպեսզի երեխաները կարողանան վերլուծել իրենց աշխատանքները, ունենան քննադատական վերաբերմունք, կատարված աշխատանքը համեմատեն նատուրայի հետ: Ցանկալի է, որ հաճախակի կազմակերպվեն թե՛ դասարանական առաջադրանքների, և թե՛ տնային աշխատանքների խմբային վերլուծություններ: Աշակերտի մոտ պետք է զարգացնել երկարատև, քրտնաջան աշխատանքի, կամքի, ուշադրության (կենտրոնանալու) ունակություններ:

Վերջնարդյունքները

Ձեռք բերելով գիտելիքներ՝ աշակերտը պետք է կարողանա դրանք կիրառել ստեղծագործական աշխատանքներում վառ, պատկերավոր, ճշգրիտ և ամբողջական կերպարներ ստեղծելու համար: Հեռու մնա մաներայնությունից, տարբեր էֆեկտիվ միջոցների կիրառումից, ստիլիզացիայից:

Ծրագիր/ Թեմատիկ պլանավորում

1 ուսումնական տարի

Դասավանդվող առարկաներ՝

Գծանկարչություն

Գեղանկարչություն

Դեկորատիվ-կիրառական արվեստ

ԳԾԱՆԿԱՐՉՈՒԹՅՈՒՆ

Առարկային բովանդակությունը

Գծանկարչությունը կերպարվեստի ուսուցման պրոցեսում համարվում է հիմնական առարկաներից մեկը: Գծանկարում ռեալիստորեն արտացոլելով իրականությունը՝ արվեստագետը միաժամանակ նաև կարողանում է գեղագիտորեն արտահայտել իր անձնական մտքերը ,զգացմունքները:

Մանկական գեղարվեստի դպրոցներում կերպարվեստի բնագավառում գրագիտություն սովորեցնելու համար շատ կարևոր է գծանկարի կոնկրետությունը ստուգել, ինչպես նաև սխալները ժամանակին ուղղելը: Դրա համար ուսուցիչը պետք է յուրաքանչյուր աշակերտին օգնի վեր հանելու գծանկարում թույլ տված սխալները և ցույց տա դրանք վերացնելու միջովները: Այդ դեպքում սխալները ցույց են տրվում գծանկարի թղթի մակերեսի ազատ մասերում կամ առանձին թղթի վրա: Բացի դրանից, արդյունավետ են աշխատանքների կոլեկտիվ քննարկումները:

Գիպսից գլուխ նկարելու ժամանակ աշակերտների մոտ պետք է զարգացնել ծավալապլաստիկային հասկացությունը, արվեստի ստեղծագործության գեղագիտական գեղեցկությունը: Ծավալներների պլաստիկական առանձնահատկությունների մասին բացատրելիս անհրաժեշտ է աշակերտներին ծանոթացնել նաև պլաստիկական անատոմիայի տարրական գիտելիքներին

/գանգ, կմախք/: Նատուրայից առաջադրանքները՝ կենդանի գլուխ, ֆիգուրա պետք

է լինեն գեղագիտորեն հետաքրքիր, արտահայտիչ և ունենան պարզ արտահայտված ծավալներ:

Գեղանկարչության հիմնական նյութը համարվում է գրաֆիտե մատիտը /Մ, ՅՄ/: Գրիզալի համար օգտագործվում է ջրաներկ, առաջին առաջադրանքները կարելիէ կատարել ածուխով, սանգինայով և ծայրով:

Անհրաժեշտ առաջադրանքներ են համարվում նաև կարճատև գծանկարները և ճեպանկարները, որոնք աշխուժացնում են ուսումնական պրոցեսը, օժանդակումեն աչքի ընկալման սրությունը, ընդարձակում դիտողականությունը, զարգացնում տեսողական հիշողությունը, աշակերտի մոտ դաստիարակում դիտածը արագ կերպով թղթի վրա վերարտադրելու ունակությունները:

Դասավանդումը պետք է զուգորդվի դաստիարակչական աշխատանքի հետ և նպաստի անհատի ձևավորմանը՝ զարգացնելով նրանց մոտ հետաքրքրասիրություն և կատարողական ունակություններ դեպի ստեղծագործական աշխատանքը: Այդ նպատակի համար չափազանց օգտակար է լավագույն գծանկարի մրցույթներ անցկացնելը, ուսուցողական գծանկարի ցուցահանդեսներ ու դրանց քննարկումներ կազմակերպելը: Անհրաժեշտ է սովորցնել տեսնել կյանքը և կյանքից կարողանալ հետաքրքիր պահեր ընտրել ստեղծագործական աշխատանքի համար:

Առաջին ուսումնական տարի

Ուսումնական առաջին տարում տրվում են սկզբնական տեղեկություններ գծանկարչության մասին: Չափազանց կարևոր է հենց սկզբից երեխաներին սովորեցնել նատուրայի էմոցիոնալ ընկալմանը և այն թղթի մակերեսի վրա ճիշտ տեղադրելուն: Ոչ մի դեպքում չի կարելի գծանկարի դասավանդումը տանել միայն այդ առարկայի օրենքների ու կանոնների կիրառման սահմանափակ թելադրումով. բոլոր գոյություն ունեցող օրենքները աշակերտին պետք է օգնեն թղթի մակերեսին պատկերելու իրեն շրջապատող կյանքը և հնարավորություն ընձեռեն արտահայտելու իր վերաբերմունքը դեպի կյանքը:

Բոլոր աշխատանքները պետք է լուծված լինեն թղթի մակերեսին ճիշտ տեղադրումով և ընդհանուր համաչափությունները պահպանելով: Առաջին իսկ

առաջադրանքից պետք է անդրադառնալ /ելնելով առաջադրանքի բնույթից/ կարողանալ ճիշտ որոշել աշխատանքի ֆորմատը:

Հեռանկարչության, ինչպես նաև լուսաստվերային օրենքների ուսումնասիրմանը պետք է անցնել միայն այն դեպքում, երբ աշակերտները զգում են դրա կարիքը: Աշակերտը պետք է սովորի այդ օրենքները գծանկարում գիտակցորեն օգտագործել:

Ուսուցումը հիմնականում տարվում է կենցաղային իրերից կազմվածերկարատև /մինչև 9 ժամ/ նատյուրմորտ նկարելով: Անհրաժեշտ է առաջադրանքները դնել այնպես, որ աշակերտները տիրապետեն տարբերֆակտուրա, նյութականություն և ծավալներ ունեցող բազմազան կենցաղային իրեր նկարելուն:

Թեմատիկ պլանով նախատեսված առաջադրանքներից բացի ուսուցիչը հանձնարարում է կարճատև առաջադրանքներ, որոնք պետք է լինենճեպանկարներ կենդանիներից, տարբեր իրերից, մարդու ֆիգուրայից: Պետք է առաջարկել կատարել գծանկարներ հիշողությամբ / կարելի է նկարել նույն իրը կամ առարկան տարբեր դասավորությամբ, կամ տարբեր դիտակետից/, կարճատև առաջադրանքները կարելի է կատարել փափուկ գրաֆիկ նյութերով:

Ցանկալի է նատյուրմորտների իրերը լուսավորված լինեն վերևից և մի փոքր կողքից, որ ավելի արտահայտիչ դառնան իրերի ծավալները:

Առաջին տարում աշակերտները տիրապետում են գրաֆիկական նյութերի արտահայտչականության հնարավորությանը, ձեռք են բերում ունակություններ իրերի ծավալները և բնույթը պատկերելու գործում /սկզբնական շրջանում ծանոթանում են մեծ մասամբ տափակ հարթություններին/: Աշակերտները գաղափար են կազմում տեսողական հեռանկարչության մասին, ծանոթանում են պարզ երկրաչափական մարմինների հեռանկարչական կառուցման հիմունքներինև տարբեր ծավալային իրերի վրա լույսի ու ստվերի տեղաբաշխմանը:

Ուսման առաջին տարում աշակերտները պետք է կարողանան յուրացնել երկարատև աշխատելու՝ հաջորդական կատարման հիմունքները: Երկարատև աշխատանքների ընթացքում աշակերտները պետք է լուծեն նաև տարածականության խնդիրը տոնի միջոցով:

Առաջադրանք 1

Զրույց գծանկարչության մասին: Գծանկարը որպես կերպարվեստի հիմք: Լույսի դերը՝ լույսը առարկայի կամ իրերի ծավալ դարձնում է տեսանելի, որով և հնարավորություն է ստեղծվում պատկերելու այն: Գծանկարներ անելու միջոցները՝ գիծ, շտրիխ, տոն:

Մեկից- երկու ոչ բարդ իրերից առաջադրանք / առաջադրանքը պետք է շատ արտահայտիչ լինի/:

Նյութ՝ թուղթ, տարբեր կարծրության մատիտներ:

Չափ՝ 1/4թուղթ:

Լուսավորություն՝ վերևից, կողքից :

Ժամանակը զրույցի համար՝ 1 ժամ, առաջադրանքի համար՝ 6 ժամ:

Խնդիրն է՝ ծանոթանալ նյութերին: Ինչպես ճիշտ նստել նկարելու ժամանակ: Ինչպես սրել մատիտը, նկարելու ժամանակ ինչպես պահել մատիտը: Ինչպես և երբ օգտվել ռետինից: Գտնել առաջադրանքի ֆորմատը և տեղադրումը: Տրվում է հասկացողություն գծի, շտրիխի, տոնի, պետնոյի մասին: Ծանոթացում համաչափություն հասկացության հետ:

Առաջադրանք 2

Մեկ թերթ թղթի վրա նկարել թիթեռներ: Ստանալ ուղիղ և կոր գծեր, <<Շախմատի տախտակ>> հատվածը աչքաչափով բաժանել կենտ և զույգ հավասար հատվածների:

Նյութ՝ թուղթ, մատիտ:

Չափ՝ 1/4թուղթ:

Լուսավորություն՝ բնական:

Ժամանակ՝ 6 ժամ:

Խնդիրն է՝ գծանկարի տեղադրումը /կոմպանովկան/: Հասկացություն սիմետրիայի մասին: Սիմետրիան՝ առանցքի գծի կամ կետի նկատմամբ մի կեսի արտացոլումն է հայելու մեջ: Սովորեցնել սիմետրիկ իրերի կառուցման մեթոդը: Գիծ, շտրիխ, տոն:

Առաջադրանք 3

ԳԵՂԱՆԿԱՐՉՈՒԹՅՈՒՆ

Առարկային բովանդակությունը

Մանկական գեղարվեստի և արվեստի դպրոցներում գեղանկարչության կուրսը ուսումնական պրոցեսի կարևորագույն բաժիններից է:

Նպատակն է աշակերտների մոտ շրջապատող իրականությունն իր ամբողջ բազմազանությամբ և գունային հարաբերություններով տեսնելու և պատկերելու ունակություններ զարգացնելը: Տրիապետելով ջրաներկի, գուաշի տեխնիկական միջոցներին և օգտվելով գեղանկարչության միջոցներից՝ աշակերտը պետք է կարողանա ծավալները և հարաբերությունները ստանա վրձնահարվածների <<ծեփելու>>, <<լեպկայի>> միջոցով:

Կատարված ուսումնասիրությունների և աշխատանքների հիման վրա աշակերտները պետք է սովորեն ուսումնասիրական /էտյուդային/ աշխատանքը կատարել հաջորդականությամբ. Այսինքն՝ վերցնելով մեծ գունային հարաբերությունները ստանալ գունաօդային միջավայր և վերջում աշխատանքը հասցնել առարկաների, իրերի նյութականությանը: Նյութի խորը իրացման նպատակի համար անհարժեշտ է, որպեսզի աշակերտների գործնական, կատարողական ունակությունները հիմնված լինեն ամուր տեսական գիտելիքների իրացման վրա, որի համար նրանց պետք է ծանոթացնել գունային տեսության

հիմունքների հետ, ինչպես նաև արտասահմանյան, ռուսական, ազգային գեղանկարչության վարպետների հետ:

Այդ ամենի հիման վրա աշակերտների մոտ կամաց-կամաց զարգանում են գույնի, ֆորմայի, ռիթմի, տոնի, դեկորատիվության, կոնտրաստի մասին հասկացողությունները. ինչպես նաև աշակերտները գաղափար են կազմում ընդհանուրի և մասնակիի /դետալ/, աշխատանքի ընդհանուր կոլորիտի մասին :

Սովորելու տարիներին աշակերտները պետք է ստանան որոշ գիտելիքներ գունային տեսության, այսինքն՝ պատկերացում կազմեն գունային սպեկտրի, նրա հիմնական և լրացուցիչ գույների, սառը և տաք գույների, հակադիր և իրար մոտ գույների, <<լոկալ գույնի>> , տոնի դերի, առարկայի ծավալի և նյութականություն ստանալու , ռեֆլեքսների մասին:

Աշխատանքների ընթացքում աշակերտներին պետք է ծանոթացնել ջրաներկով աշխատելու զանազան ձևերին՝ երկարատև, բազմաշերտ, <<ա լա պրիմա>> , <<թաց>> և կիսաչոր վրձնով աշխատելու ձևին:

Գեղանկարչական աշխատանքների ժամանակ հատկապես պետք է ուշադիր հետևել գծանկարի պահպանմանը: Առաջադրանքը սկսելուց առաջ ուսուցիչը պետք է բացատրի առաջադրված խնդիրները, առաջադրանքի կատարման հաջորդականությունը, նկարելու տեխնիկան: Ջրաներկով աշխատելու ժամանակ պետք է հետևել, որ աշակերտը ճիշտ ընտրի իր տեղը: Պետք ՝ նաև հիշեցնել, որ աշակերտները պետք է պարբերաբար հեռու տարածությունից դիտեն իրենց աշխատանքը, որպեսզի կարողանան այն ավելի ամբողջական տեսնել և համեմատել տրված առաջադրանքի հետ:

Գեղանկարչական առաջադրանքների մեծ մասը կազմում է նատյուրմորտը: Առաջադրանքներ դնելիս ուսուցիչը պետք է հաշվի առնի դրանց նպատակային և մեթոդական ուղղվածությունը: Առաջադրանքների համար նպատակահարմար է օգտագործել հասարակ, ծավալով և պարզ գույներով իրեր: Նատյուրմորտի առաջադրանքը դնելիս պետք է հաշվի առնել, որ այն արվեստի գործ է ներկայացնում և պետք է դրվի կոմպոզիցիոն հիմունքներով: Ուսուցչից պահանջվում է առաջադրանքը կազմել այնպես, որ այն լինի արտահայտիչ, իսկ առաջադրված խնդիրները՝ պարզ ու հասկանալի, այսինքն՝ նատյուրմորտը լուսավորված լինի կողքից կամ դիմացից, լուծված լինի մեծ սիլուետների խնդիրը /լուսավոր-մուգ կամ մուգ-լուսավոր ֆոնի վրա/, կապը միջավայրի հետ / ֆոն,

ինտերիեր/ ծավալների պլաստիկ լուծումը, գեղանկարչական ընդհանուր

տոնայնությունը, կոլորիտի խնդիրը. Այսինքն պետք է ամբողջովին լուծված լնի տոնի և գույնի համաձայնության խնդիրը:

Գեղանկարչություն առարկայից տարվա ընթացքում ձեռք բերվածը հանրագումարի է բերվում քննական առաջադրանքում:

Առաջին ուսումնական տարի

Սկսնակ աշակերտների մոտ պետք է զարգացնել սեր դեպի շրջապատող միջավայրը, այն իր ողջ գունային բազմազանությամբ նկարելու կարողություն, որի համար շատ կարևոր է կերպարվեստի լավագույն նմուշներիուսումնասիրությունը: Այս և այլ խնդիրների հաջող լուծման համար պետք է հենցսկզբից ի նկատի ունենալ տարիքային առանձնահատկությունները, հասանելի ձևով /մինչև տեսական հիմունքնե-րին անցնելը/ աշակերտներին բացատրել տաքև սառը, լրացուցիչ և իրար մոտ գույների մասին, պետք է բացատրել, թե ինչ է լոկալ գույնը, որն է գեղանկարչության մեջ տոնը: Առաջին իսկ առաջադրանքից պետք էհետևել, որ ճիշտ լուծված լինի թղթի մակերեսի տեղադրումը /կոմպանովկան/:

Աշակերտներին պետք է դաստիարակել առաջադրանքի գունային մեծ հարաբերությունները տեսնելու ունակությանը: Աշակերտը պետք է կարողանա վերլուծել մեկ գույնի ազդեցությունը մյուսի վրա ներգործելու երևույթը, զգալ, թե ինչպես է առարկայի լոկալ գույնը փոփոխություն կրում տվյալ միջավայրի և լուսավորվածության ներքո: Պետք է տալ հասկացություն գունային ներդաշնակության մասին, գույնի դեկորատիվության, գունային անցումների բազմազանության մասին: Աշակերտը պետք է իմանա, թե ինչ է լույսը, ստվերը, կիսատոնը, փայլը, գունային արտացոլումը:

Սովորելու ընթացքում աշակերտի մոտ պետք է դաստիարակել գույնի էմոցիոնալ վերարտադրման և նրա կերպարայրն արտահայտման հասկացությունները:

Սկսնակ աշակերտը պետք է պատկերացում ունենա գեղանկարչական նյութերի տեխնիկական հնարավորությունների մասին: Սկզբում նյութը հիմնականում պետք է լինի ջրաներկ: Գուաշի օգտագործումը սկսնակների մոտ պետք է լինի

սահմանափակ: Հարթապատկերային-դեկորատիվ նատյուրմորտներ նկարելու ժամանակ երբեմն կարելի է թույլատրել օգտագործել ջրաներկի հետ նաև գուաշի

սպիտակ գույնը: Գուաշի օգտագործումը մեծ մասամբ իջեցնում է առարկայի պլաստիկայի վրա աշխատելու, էտյուդի նուրբ գեղանկարչական մշակումների հնարավորությունները, որով և աշակերտը հնարավորություն չի ունենում իր մեջ զարգացնելու գեղանկարչական բարձր կուլտուրա:

Սկսնակ աշակերտները վերջնականապես պետք է ըմբռնեն, որ մեզ շրջապատող միջավայրում միևնույն առարկան, միջավայրի ազդեցության ներքո չփոխելով իր լոկալ գույնը /այսինքն իր հիմնական գույնը/, արտացոլումների շնորհիվ կրում է գունային տարբեր երանգներ:

Գույնով նկարել՝ նշանակում է տեսնել միջավայրը իր գունային բարդ փոխհարաբերություններով: Սկսնակ աշակերտը պետք է սովորի աշխատանքը նատյուրմորտի վրա հաջորդականորեն տանելուն. այսինքն կարողանա ճիշտ կատարել տեղադրումը /կոմպանովկան/, առարկաները կամ իրերը կառուցել կոնստրուկտիվ կերպով և վերջացնել առաջադրանքը՝ լուրջ ուշադրություն դարձնելով տվյալ առաջադրանքում առաջադրված խնդիրների կատարմանը:

ՈՒսուցիչը պետք է լուրջ ուշադրություն դարձնի աշակերտի կողմից նյութով աշխատելու տեխնիկայի պրոֆեսիոնալ տիրապետմանը:

Բոլոր առաջադրանքները կատարվում են 1/4 մինչև 1/2 թղթերի վրա:

Թղթի ֆորմատը պետք է համապատասխանի առաջադրանքի կոմպոզիցիոն լուծմանը:

Առաջադրանք 1

Նատյուրմորտ 2-3 առարկաներով:

Նյութ՝ թուղթ, ջրաներկ:

Չափ՝ 1/4 թերթ թուղթ: Ժամանակը՝ 6 ժամ:

Խնդիրն է՝ ծանոթացում նյութի հետ /ջրաներկ, վրձին, թուղթ/:

Առաջադրանք 2

Հարթ առարկաների պատկերում՝ մեծ տերևներ, ծաղիկներ, գրքեր…Նյութը՝

թուղթ, ջրաներկ:

Չափ՝ 1/4 թերթ թուղթ:

Ժամանակ՝ 12 ժամ, 2 առաջադրանքով /6 ժամ/:

Խնդիրն է՝ թղթի մակերեսի կոմպոզիցիոն լուծումը, ջրաներկով աշխատելու ձևերը, փնտրել ֆորմատը, թղթի միասնական և ամբողջական լինելը, առարկաների կերպարային ընկալումը աշակերտների կողմից, աշխատանքի արտահայտչականությունը:

Առաջադրանք 3

ԴԵԿՈՐԱՏԻՎ - ԿԻՐԱՌԱԿԱՆ ԱՐՎԵՍՏ

առարկայի բովանդակությունը

Կիրառական արվեստ առարկայի ծրագրային դրույթներով նախատեսվում է մերձեցնել երեխաներին հայկական ժողովրդական կիրառական արվեստի ազգային ակունքներին: Հիմնարար խնդիրներից են նաև ժողովրդական արհեստների պրոպագանդումը, ինչպես նաև ներկայումս մոռացության տրված որոշ տեսակներ կյանքի կոչելը:

Ծրագրում ներկայացված են Հայաստանում առավել հայտնի կիրառական արվեստի տեսակները. գորգագործություն, կարպետագործություն և նրանց տեսակները, փորագրության արվեստ /քար, փայտ, մետաղ/, խեցեգործություն, ասեղնագործություն, դաջազարդություն, ժանյակագործություն, կաշվի գեղարվեստական մշակում և այլն: Նրանց հետ ծանոթացումը և մասսայականացումը կօգնի շատ երեխաների մասնագիտական կողմնորոշմանը, այս բնագավառում փոքր բիզնեսի զարգացմանը:

Մեզ շրջապատող աշխարհն ու մարդու կողմից ստեղծած իրերը անմիջականորեն կապված են դիզայնի հետ, որի հետ առնչվելը նպաստում է երեխաների կոնստրուկտիվ մտածողության զարգացմանը, միջավայրում առարկաների ծավալների, գույնի, կերպարի, նշանակության, ֆունկցիոնալ հնարավորությունների և հոգեբանական ազդեցությունների հետևանքները վերլուծել կարողանալուն, գեղարվեստական խնդիրներ լուծելիս տրամաբանության, ձևի ու ֆունկցիայի ճշգրիտ համատեղմանը: Այս ամենի շնորհիվ երեխաների մեջ պետք է ձևավորել ոչ միայն գեղագետին, այլև մեր երկրի տնտեսության ապագա արտադրողին, որն ավելի լավ կընկալի համաշխարհային տնտեսության ժամանակակից խնդիրները, ավելի ստեղծագործաբար կվերաբերվի իր մասնագիտությանը:

Դիզայնը պետք է ներկայացվի որպես ժամանակակից կարևոր և բազմաշերտ գիտություն, որի ընդգրկած բնագավառները շատ են և բազմազան:

Նյութի վրա ծրագրային դասաժամերով աշխատելը հնարավորություն է տալիս խորությամբ ուսումնասիրել կիրառական արվեստի մեկից երկու տեսակներ և մինչև ուսման ավարտը տիրապետել դրանց կատարման հմտություններին: Մնացած տեսակների հետ ծանոթացումը պետք է կատարվի էսքիզների միջոցով: Բոլոր առաջադրանքների հիմքում դրված է երեխաների տրամաբանելու կարողությունը, հատկապես այն, որ երեխան կարողանա գտնել կիրառական արվեստի նոր ձևեր, որոնք բացի էսթետիկական խնդիրներից ունենան նոր կիրառական նշանակություն, ֆունկցիոնալ անհրաժեշտ լուծումներ և ընդունելի լինեն: Կիրառական արվեստի որևէ տեսակը խորությամբ ուսումնասիրելու համար, պետք է հաշվի առնել տվյալ բնակավայրում նրա արտադրության, հումքի և այլ պայմանների առկայությունը, շուկայում նրա պահանջարկն ու անհրաժեշտությունը:

ԱՌԱՋԻՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐԻ

Ծանոթացնել դեկորատիվ-կիրառական արվեստին ,ներկայացնել Հայաստանում ժողովրդական արհեստների առավել հայտնի տեսակները, որոնք են՝ գորգագործություն, կարպետագործություն, ասեղնագործություն, քարի, փայտի /դաղդղան, կենցաղային իրեր/, մետաղի, ոսկորի փորագրություն, խեցեգործություն /բրուտագործություն և քանդակ/, ոսկերչություն և դեկորատիվ կիրառական արվեստի ժամանակակից տեսակները՝ տեքստիլային դիզայն /գործվածքային կտոր և տպած կտոր/, դաջազարդություն, խոսել դիզայնի մասին /սերիական իրեր և անհատական ստեղծագործություններ/:

Առաջադրանք 1

Գունավոր թղթերից կտրված տարբեր պատկերների միջոցով ստեղծել դեկորատիվ կոմպոզիցիա: Հասկացություն դեկորատիվ հարթապատկերային լուծումների, ձևերի, համաչափության, ռիթմի, սիմետրիայի, հարմոնիայի մասին:

Նյութ՝ թուղթ, գուաշ, ջրաներկ, մատիտ, գունավոր թղթեր, սոսինձ:

Կատարման տեխնիկա ՝ ապլիկացիայի եղանակով:

1-ին առաջադրանք՝ 2 ժամ:

Առաջադրանք 2

Ծանոթացնել հայկական գորգագործության և կարպետագործության մեջ օգտագործվող ավանդական զարդանախշերին և նրանց անվանումներին: Բացատրել գորգարվեստում պատկերվող զարդանկարների օգտագործման ձևերըև առանձնահատկությունները, գույնի օգտագործման մեթոդները: Ներկայացնել գորգի և կարպետի տեսակները, նրանց կատարման տեխնիկան և կոմպոզիցիոն կառուցման ձևերը: Նկարել 2-ից 3 կրկնվող էլեմենտներով զարդանախշեր գորգի կամ կարպետի երիզի համար:

Նյութ՝ թուղթ, գուաշ, ջրաներկ:

1-ին առաջադրանք ՝ կատարել միլիմետրովկայի վրա՝ 2 ժամ: